ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
НАГОРНО-КАРАБАХСКАЯ РЕСПУБЛИКА
REPUBLIC OF NAGORNO KARABAKH

ՇՈՒՇԻԻ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ШУШИНСКАЯ
ОСНОВНАЯ ШКОЛА
ИМЕНИ Х. АБОВЯНА

SHUSHI' S SECONDARY SCHOOL OF KH. ABOVYAN

ք Շուշի, Ղազանչեցոց փ. 47 ☎ 73-12-15, 73-18-94 г. Шуши, ул. Газанчецоц
Toun Shushi, street Khazanchetsots 47

«№ 21 » « 20» «ապրիլի» 2013թ.

ՀՀ ԿԳՆ Երևանի << Մխիթար Սեբաստացի >>

կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանին

Պատվարժան պարոն Ա.Բլեյան,

Մենք ողջունում և գնահատում ենք բոլոր այն ձեռնարկումները, որոնց շնորհիվ մեր պատմության փառքի վկա, հայոց ոգու բերդ քաղաք Շուշին կմոտենա իր վաղեմի փառքին, որպեսզի այլևս չասվի, թե Շուշին եղել է, այլ՝ կա ու հավերժ կլինի..

Հայոց Շուշիի՝ Խ.Աբովյանի անունը կրող կրթօջախի ուսուցչական և աշակերտական կոլեկտիվները մեծ սիրով ու ոգևորությամբ են սպասում մշակութային խոշոր գործիչ Մխիթար Սեբաստացու անունը կրող կրթահամալիրի ներկայացուցիչներին՝ նշված առանձնահատուկ ու կարևոր տոները միասին տոնելու համար:

Անչափ շնորհակալ ենք, որ Դուք բոլոր ժամանակներում էլ հավատարիմ եք մնացել մեր մեծերի՝ մեզ կտակած միասնության պատգամին և ամեն պատեհ առիթով ձգտում եք մի քանի դպրոցների աշակերտական և ուսուցչական կոլեկտիվներին միավորել, համախմբել համագործակցության կոչել՝ քաջ գիտակցելով, որ միասնությունը զորեղ ուժ է... Եվ ազգովի դեռ շատ անելիքներ ունենք, որն էլ այդ ուժի կարիքն ունի:

Այո՛, այդ միասնությունը օդի ու ջրի պես պետք է մեր բազմաչարչար ժողովրդին, իսկ Դուք ամենադժվար պահերին անգամ այդ ամենի ջատագովն ու դրոշակակիրն եք:

Իսկապես մարդու՛ Ձեր տեսակի անհրաժեշտությունը կա, առանձնապես մեր ժամանակներում. օգնության ձեռք մեկնել բոլոր նրանց, ովքեր դրա կարիքն ունեն:

Գտնում ենք, որ յուրաքանչյուր հայի, անկախ նրա քաղաքացիությունից և հասարակության մեջ ունեցած տեղից ու դիրքից, խնդիրն է՝ նպաստել, աջակցել, օգնել, որ հինավուրց Շուշին վերակենդանացվի, վերածվի հայեցի և վերընծայվի համայն հայությանը...

Թող Աստծո աջը լույսի նման իջնի Շուշիի հայեցի վերածնմանը...

Ակնհայտ է , որ Դուք ևս անչափ մտահոգված եք Շուշիի հայեցի վերածնման խնդրով:

Մայիսի 26-28-ը Հանրապետության օրվան նվիրված <<Մշակութային Շուշի >> նախագծի իրականացումը, որը նպատակ ունեք ավանդական դարձնել, ընդգծված ուշադրության արժանի նախաձեռնություն է, որի շնորհիվ, վստահ եմ,կկարողանանք վեր հանել մեր ազգային արժեքները և նրա ամուր հիմքի վրա կառուցել նորը:

Այո՛, Դուք ճիշտ եք,նկատել՝ Շուշիի վարչակազմի ղեկավարը, ինչպես այդ մասին ես ասել եմ նաև բանավոր,դպրոցին բարեկամ ղեկավար է: Նա ամեն կերպ ձգտում է օգտակար լինել դպրոցին՝ անկախ ամեն ինչից: Եվ այլ կերպ լինել չի կարող, քանզի նա ևս մանկավարժ է և մանկավարժի զավակ:

Չնայած Դուք հարկ եք համարել վերստին նշել, որ կրթահամալիրը հուսալի գործընկեր և հյուրընկալ օջախ է մեր դպրոցի համար, մենք ավելի քան համոզված ենք, որ Ձեր գլխավորությամբ այն նաև հարազատ օջախ է մեզ համար:

Համոզված եղեք, որ մեր դպրոցը ևս հարազատ օջախ է կրթահամալիրի համար, և վստահ ենք, որ մեր միասնությունը, համերաշխությունը է՛լ ավելի բարձր մակարդակի վրա կդրվի, որն էլ շատ օգտակար կլինի մանավանդ մեր դպրոցի համար:

ԼՂՀ վաստակավոր մանկավարժ

Շուշիի Խ.Աբովյանի անվան

հիմնական դպրոցի տնօրեն՝ Նազիկ Նալբանդյան